*ԼՈՒՐԵՐ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻՑ*

# ՏՈՆ ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ

Հոկտեմբերի 11-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սրբոց Թարգմանչաց Վարդապետաց տոնը:

Սուրբ Թարգմանիչների արգասավոր գործունեությամբ սկզբնավորվեց հայ թարգմանչական և ինքնուրույն գրական ժառանգությունը: Սակայն Թարգմանիչների մեծագույն ձգտումը, նրանց կյանքի իմաստն ու առաքելությունը դեպի Աստված հարազատ ժողովրդի ընթացքն ու հայ ազգային կերպարը հաստատուն ու անխաթար պահելն էր: Նրանց սուրբ ու նվիրական հիշատակը ոգեկոչելով՝ մեր Եկեղեցին ձգտում է արթուն պահել նրանց արարող ոգին մեր կյանքում և խնդրել նրանց բարեխոսությունը:

Այս օրը կրկնակի տոն է վանաձորցիների համար, քանզի հոկտեմբերի 12-ը Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու անվանակոչության և ուխտի օրն է նաև: Առավոտյան Սուրբ Պատարագի ժամանակ ներկաները հնարավորություն ունեցան մոտենալ և համբուր ել Արևմտյան Հայաստանից՝ Վանա լճի հարավային ափին գտնվող Սուրբ Գրիգոր Նարեկացու անունը կրող ճգնարանից բերված և Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի ձեռամբ օծված քարի մասունքը: Այդ օրը կատարվեց նաև Ջրօրհնյաց սրբազան արարողությունը, և մեր հավատավոր ժողովուրդը կարողացավ անմիջականորեն հաղորդակից դառնալ նորօրհնյալ Մյուռոնի սրբարար շնորհներին:

Պատարագից հետո Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու խաչքավոր, Վանաձորի Պետական Մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Գուրգեն Խաչատրյանի կողմից մատուցվեց մատաղ՝ ի մխիթարություն մեր ժողովրդի: Իսկ ավելի ուշ եկեղեցու սրահում տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված Սուրբ Գրիգոր Նարեկացուն, որը կազմակերպվել էր «Նարեկացի» մշակութային կենտրոնի կողմից: Միջոցառման ժամանակ բանախոսությամբ հանդես եկավ Սուսաննա Սարուխանյանը, ընթերցվեցին հատվածներ «Մատյան ողբերգության” պոեմից, որոնք ընդհատվում էին Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու քառաձայն երգչախմբի կատարումներով՝ խմբավարությամբ Ռուզաննա Մխիթարյանի: Հանդիսությանը ներկա էին նաև հանրակրթական դպրոցներում Հայ Եկեղեցու Պատմություն առարկան դասավանդող ուսուցիչները: Միջոցառման ավարտին Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը շնորհավորեց բոլոր ուսուցիչներին այս հրաշալի տոնի կապակցությամբ, և ներկաները Սրբազան Հոր խոսքով և օրհնությամբ մխիթարված ու զմայլված բաժանվեցին եկեղեցուց:

*ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ*